**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-10/39-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 04 .10.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ.Ղամբարյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Կուբան էքսպորտ» ՍՊԸ-ի հետ/, ի դեմս տնօրեն Ն.Շախնազարյանի, ով գործում է «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 26.09.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-10/39-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը փոխադարձ համաձայնությամբ, որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով Վաճառողի 27.09.2019թ. մուտք 9393 գրությունը և Պայմանագրի 8.8 կետը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի /ածուխ/ մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ սահմանելով 2019թ.-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներ, բայց ոչ ուշ 14.11.2019թ., Պայմանագրի Հավելված № 1-ի փոխարեն հիմք ընդունել սույն Փոփոխությամբ ներկայացվող Հավելված № 1-ը:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն Փոփոխությունը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ |
| ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Երևան, Կոմիտաս 16, բն. 53 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011117034 | Հ/Հ 2052822096131001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00165322 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | Տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ն.ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ |

Լ.տ. Մ. Շախնազարյան
Նոյն. փաստ. 0055

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-10/39-1 գնման պայմանագրի № 1 փոփոխության

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/հ | CPV | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | |
| | | | | | | | | Զորամասի համարը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 09111100/2 | Ածուխ | ДО մարկայի ածուխ, չափսը 30-70մմ, կալորիականությունը՝ 4900-7630 կկալ/կգ, համաձայն ГОСТ 10742-71 | տոննա | 113400 | 68040000 | 600 | 70179 | գ. Խաչիկ | 100 | 2019թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներ, բայց ոչ ուշ քան 14.11.2019թ |
| | | | | | | | | 52258 | գ. Զոփռլու | 200 | |
| | | | | | | | | 75937 | գ. Յանշաղ | 300 | |

Ծանոթություն
**Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:**
Ապրանքները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ ԿՇ ԵՎ ՁԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | «ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ<br>Տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ն.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ |

Լ. ա. Մ. Շահնազարյան
Հաշվ. փաստ. 00551058I